Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-887-03.03.2021-ՖՎ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով.

«Հոդված 35.1 Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր

1. Կենտրոնական բանկը սույն օրենքով սահմանված իր նպատակների և գործառույթների իրականացման, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» օրենքով սահմանված կարգով ներպետական իրավասու մարմինների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով վարում է բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր, որին պարտադիր մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր առևտրային բանկերը:

2. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրը ներառում է բացված, փակված (այդ թվում՝ սույն հոդվածի ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 5 տարիների ընթացքում փակված) բանկային հաշիվների, ինչպես նաև տրամադրված, օգտագործումը դադարեցված (այդ թվում՝ սույն հոդվածի ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 5 տարիների ընթացքում օգտագործումը դադարեցված) բանկային պահատուփերի վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես՝ բանկի հաճախորդի բանկային հաշվի համարը, բանկային հաշվի բացման և փակման, բանկային պահատուփի տրամադրման և օգտագործման դադարեցման ամսաթվերը, հաճախորդի և հաճախորդի կողմից լիազորված անձի նույնականացման՝ պետական իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի տվյալները, ինչպես նաև բանկի վերաբերյալ տեղեկությունները:

3. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա նույնականացման՝ պետական իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի տվյալների և բանկի վերաբերյալ տեղեկությունների ցանկը, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունների (այդ թվում՝ հաշվետվությունների) տրամադրման ձևը և ժամկետները սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

2-րդ ընթերցում

Կ-887-03.03.2021-ՖՎ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-69 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով.

«Հոդված 35.1 Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր

4. Կենտրոնական բանկը սույն օրենքով սահմանված իր նպատակների և գործառույթների իրականացման, ինչպես նաև «Բանկային գաղտնիքի մասին» օրենքով սահմանված կարգով ներպետական իրավասու մարմինների հետ համագործակցության արդյունավետության բարձրացման նպատակով վարում է բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստր, որին պարտադիր մասնակցում են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր առևտրային բանկերը:

5. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրը ներառում է բացված, փակված (այդ թվում՝ սույն ~~օրենքի~~ հոդվածի ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 5 տարիների ընթացքում փակված) բանկային հաշիվների, ինչպես նաև տրամադրված, օգտագործումը դադարեցված (այդ թվում՝ սույն ~~օրենքի~~ հոդվածի ուժի մեջ մտնելու օրվան նախորդող 5 տարիների ընթացքում օգտագործումը դադարեցված) բանկային պահատուփերի վերաբերյալ տեղեկություններ, մասնավորապես՝ բանկի հաճախորդի բանկային հաշվի համարը, բանկային հաշվի բացման և փակման, բանկային պահատուփի տրամադրման և օգտագործման դադարեցման ամսաթվերը, հաճախորդի և հաճախորդի կողմից լիազորված անձի նույնականացման՝ պետական իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի տվյալները, ինչպես նաև բանկի վերաբերյալ տեղեկությունները:

6. Բանկային հաշիվների կենտրոնացված ռեեստրի վարման կարգը, ներառման ենթակա նույնականացման՝ պետական իրավասու մարմնի կողմից տրված փաստաթղթի տվյալների և բանկի վերաբերյալ տեղեկությունների ցանկը, ինչպես նաև սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված տեղեկությունների (այդ թվում՝ հաշվետվությունների) տրամադրման ձևը և ժամկետները սահմանվում են Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ:»

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-887-03.032021-ՖՎ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկի հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկի բովանդակությունը	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«ՀՀ կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, հոդված 1	««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով լրացվող 35.1 հոդվածի 2-րդ մասում «սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվան» ձևակերպումն անհրաժեշտ է փոխարինել «սույն հոդվածն ուժի մեջ մտնելու օրվան» ձևակերպմամբ՝ հաշվի առնելով, որ լրացվող հոդվածի ինկորպորացման դեպքում «սույն օրենք» արտահայտությունը վերաբերելու է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքին: Սույն առաջարկը ներկայացվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: